



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք  
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,  
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մարտի 2019 թվականի N 448

«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌՎԱ ՀՐԱՊԱՐԱԿԸ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀՐԱՊԱՐԱԿ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի գրությունը, Վանաձոր համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 07-ի «Համայնքում հանրային բաց լսումների եվ (կամ) քննարկումների կազմակերպման եվ անցկացման կարգը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 75-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 33-Ն որոշմամբ հաստատված կարգը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

- 1.«Վանաձոր համայնքի Լոռվա հրապարակը Կոմիտաս վարդապետի հրապարակ վերանվանելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ 2019 թվականի մարտի 12-ից մինչև մարտի 26-ն ընկած ժամանակահատվածում:
2. Համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայք էջում տեղադրել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավեր, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:
3. Հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների օր նշանակել 2019 թվականի մարտի 25-ը:
4. «Վանաձոր համայնքի Լոռվա հրապարակը Կոմիտաս վարդապետի հրապարակ վերանվանելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի ներկայացուցիչ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի պաշտոնակատար Սուրեն Արսլանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

Ճիշդ է՝  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա.ՕՀԱՆՅԱՆ